**Ձև N 4**
**ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե**

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

| ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Միջոցառումների անվանումները** | **Միջոցառումների կատարման արդյունքները** |
| ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե | 116. | <<Ոռոգման նպատակով 2017 թվականին Սևանա լճից ջրառի մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը: | 2017 թվականի մայիսի 4-ին ընդունվել է <<Ոռոգման նպատակով 2017 թվականին Սևանա լճից ջրառի մասին>> ՀՀ կառավարության N461-Ա որոշումը: |
| ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե | 117. | <<ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 25-ի նիստի N33 արձանագրության 18-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | <<ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի N122-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի <<ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին>> N 122-Ն որոշման N 1 հավելվածի 117-րդ կետը սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարություն: |
| ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե | 118. | <<Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին>> ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծ | 2017 թվականի հունիսի 23-ին հաստատվել է <<Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին>> ՀՀ կառավարության արձանագրային որոշումը: Հետագայում 2017 թվականի հուլիսի 6-ին ընդունվել է ՀՕ-116-Ն օրենքը: |

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| **Պատասխանատու մարմինը** | **Ծրագրի կետը** | **Գերակա խնդիրները** | **Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը** |
| ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե | 108. | Ջրամբարաշինության (Կապսի և Վեդու ջրամբար) ծրագրերի նախապատրաստում և իրականացում) | **1) Կապսի ջրամբարի շինարարական թունելի մուտքամասի ռիսկերի մեղմացման միջոցառումների ավարտ:**<br>Կապսի ջրամբարի շինարարական թունելի մուտքային, ելքային հարակից լանջերի մաքրման աշխատանքներն ընդգրկվել են հակահեղեղային միջոցառումների ծրագրում: ՀՀ կառավարության 23.02.2017թ. N212-Ն որոշմամբ գումար է հատկացվել, որի համար հայտարարվել է մրցույթ: Շինարարական աշխատանքների իրականացումն ավարտված է:<br>**2) Կապսի ջրամբարի՝ <<ՋՌՀԿ/Ախուրյան գետ Փուլ 1>> ընդհանուր 25 մլն. խոր.մ. ծավալով պատվարի կառուցման համար մանրամասն նախագծման աշխատանքների ավարտ (երկրաբանական, գեոդեզիական, սեյսմիկական և գեոֆիզիկական հետազոտություններ):**<br><<ՋՌՀԿ/Ախուրյան գետ Փուլ 1>> նախատեսվում է կառուցել ընդհանուր 25 մլն. խոր.մ ծավալով ջրամբարի պատվարը: 25 մլն. խոր.մ. ծավալով ջրամբարը կբարձրացնի Շիրակի ջրանցքի իշխման տակ գտնվող շուրջ 12325 հա հողատարածքների ջրապահովվածության մակարդակը, ինչպես նաև մեխանիկական ոռոգման եղանակից ինքնահոսի անցնելով, անխափան և հուսալի ոռոգում կապահովի շուրջ 2280 հա հողատարածքների համար՝ տարեկան խնայելով 1,3 մլն.կվտ/ժամ էլեկտրաէներգիա:<br>Ներկայումս ընթանում են Կապսի ջրամբարի կառուցման մանրամասն նախագծման աշխատանքները, ավարտվել են երկրաբանական հետազոտությունները, գեոդեզիական ուսումնասիրությունները, սեյսմիկական և գեոֆիզիկական հետազոտությունները: Տեղի է ունեցել փորձագետների հանձնաժողովի հանդիպում, որի ընթացքում քննարկվել են նախագծային լուծումները:<br>**3) <<ՋՌՀԿ/Ախուրյան գետ Փուլ 2>> ոռոգման թունելի, ջրի տեղափոխող ինքնահոս խողովակաշարի և ոռոգելի տարածքներում ոռոգման ցանցի կառուցման համար վարկային համաձայնագրի ստորագրում:**<br><<ՋՌՀԿ/Ախուրյան գետ Փուլ 2>> նախատեսվում է Կումայրի ոռոգման թունելի, ջրի տեղափոխող ինքնահոս խողովակաշարի և շուրջ 750 հա ոռոգելի տարածքներում ոռոգման ցանցի կառուցման, ինչպես նաև նոր |

| | | | |
|---|---|---|---|
| | | | տեխնոլոգիաների սարքավորումների ձեռքբերման և տեղադրման համար: Ներկայումս վարկային համաձայնագրի առանձին համաձայնագրի նախագիծը գտնվում է քննարկման փուլում:<br>**4) Վեդու ջրամբարի պատվարի աշխատանքների մեկնարկ**:<br>Ս/թ մարտ ամսին տրվել է Վեդու ջրամբարի պատվարի աշխատանքների մեկնարկը: Ավարտվել են դաշտային գեոտեխնիկական հետազոտություններն ու գեոդեզիական ուսումասիրությունները և շուտով պատրաստ կլինի նաև ամբողջական մանրամասն աշխատանքային նախագիծը: Հաշվետու ժամանակահատվածում խորհրդատուի հետ կազմակերպվել է հանդիպումներ և քննարկվել են կապալառուի կողմից ներկայացված նախագծային լուծումները: Կապալառուն արդեն ավարտել է մոբիլիզացիոն աշխատանքները, ենթակառուցվածքները՝ գազ, խմելու ջուր, էլ սնուցման գիծ և ճանապարհ, կառուցումը: Ներկայումս ընթանում են Պատվարների հիմքի և Վարարային ջրհեռի փորման աշխատանքները, ինչպես նաև ավարտին է մոտենում ոռոգման ջրանցքի (կուլվերտ) հողային աշխատանքները:<br>**5) Վեդու ջրամբարի իշխման տակ գտնվող ոռոգման ցանցի վերակառուցման նպատակով** խորհրդատվական ծառայությունների մատուցման մրցույթի տեխնիկական առաջարկները ներկայացվել են սույն թվականի դեկտեմբերի 25-ին: Ներկայումս ընթանում է մրցութային առաջարկների գնահատման գործընթաց: |
| ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե | 109. | Ոռոգման համակարգերի վերականգնման, վերակառուցման, արդիականացման ծրագրերի իրականացման ապահովում | **1) Եվրասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ <<Ոռոգման համակարգերի արդիականացում>> ծրագրի շրջանակներում մեխանիկական ոռոգումը ինքնահոս համակարգերով փոխարինման, մայր և միջտնտեսային ջրանցքների վերականգնման, ներտնտեսային ցանցի վերականգնման, շինարարության նպատակներով նախագծային աշխատանքների մեկնարկ:**<br>Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագիրը ֆինանսավորվում է ՀՀ-ում Եվրասիական բանկի հակաճգնաժամային հիմնադրամի կողմից: Հինգ տարվա իրականացման ժամանակահատված ունեցող ծրագրի ընդհանուր ֆինանսական արժեքը կազմում է 50 մլն. ԱՄՆ դոլար: Ծրագիրը ներառում է հիմնականում Արարատյան դաշտում և նախալեռնային գոտում մեխանիկական ոռոգումն ինքնահոսի փոխարինող համակարգերի կառուցումը, մայր և միջտնտեսային ջրանցքների վերականգնումը, որոշ ՋՕԸ-երի ներտնտեսային ոռոգման համակարգերի արդիականացումը և այլն: Վարկային ծրագիրը մեկնարկել է 2016 թվականի հունիսի 10-ին: Այս ծրագրով պատրաստվել ու Կայունացման և զարգացման եվրասիական |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հիմնադրամի ներդրումների ֆոնդին են ուղարկվել գնումների պլանում ներառված մի շարք փաստաթղթեր:<br>Ամփոփվել են 8 ինքնահոս ոռոգման համակարգերի կառուցման, մայր և երկրորդ կարգի ջրանցքների վերականգնման աշխատանքների նախագծման և հեղինակային հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման մրցութային գործընթացները, կնքվել են ծառայությունների մատուցման պայմանագրեր և մեկնարկել աշխատանքները:<br>**2) <<Ոռոգման համակարգերի արդիականացում>> ծրագրով նախատեսված շինարարության սկիզբ:**<br>Ամփոփվել են Գառնիի մայր ջրանցքի և Գառնի-Գեղարդ ՋՕԸ-ի սպասարկման տարածքում գտնվող Գառնի և Հացավան համայնքների ոռոգման համակարգերի վերականգնման մրցութային գործընթացները: 20 հուլիսի 2017թ. մեկնարկել են շինարարական գործընթացները, որոնք ներկայումս ընթացքի մեջ են: |
| ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե | 110. | Խմելու ջրի ոլորտում բարեփոխումների շարունակականության ապահովում, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառավարման արդյունավետության բարելավում, վարձակալի պայմանագրային պարտավորությունների վերահսկման մեխանիզմների ներդրում | **1) Անկախ տեխնիկական աուդիտի ընտրության և ներգրավվածության ապահովում:**<br>Համաձայն Վարձակալության պայմանագրի մրցութային կարգով իրականացվել է անկախ տեխնիկական աուդիտորի ընտրություն: Անկախ տեխնիկական աուդիտոր է ընտրվել Գերմանական <<Սաքսեն Վասսեր>> ընկերությունը, որի հետ 13.09.2017թ. կնքվել է պայմանագիր՝ պայմանագրային առաջին 5 տարիների ընթացքում վարձակալի աշխատանքի և նվաճումների տեխնիկական, կառավարման, շահագործման և պահպանման ամենամյա աուդիտի, ինչպես նաև պայմանագրով նախատեսված այլ աշխատանքների իրականացման համար:<br>**2) Վարձակալի կողմից պայմանագրի պահանջներին համապատասխան՝ ջրտնտպետկոմիտե ներկայացված պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի (ՊԿԱԾ) հաստատում:**<br><<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված 2017 թվականի պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի նախագիծը ՀՀ ԷԵԲՊՆ ՋՏՊԿ-ի կողմից, համաձայն Վարձակալության պայմանագրի ուսումնասիրվել, վերլուծվել է, և Վարձակալին են ուղարկվել Վարձատուի առարկությունները: Պայմանագրով սահմանված ժամկետում Վարձակալի կողմից ներկայացվել է 2017 թվականի ավարտական պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագիրը, որը տրամադրվել է անկախ տեխնիկական աուդիտորին: <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ն, մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | պետք է ներկայացնի հաշվետվություն 2017 թվականի ՊԿԱԾ-ի կատարման արդյունքների վերաբերյալ:<br>**3) Վարձակալի հետ կնքված վարձակալության պայմանագրի 2017 թվականի համար նախատեսված հիմնական կատարողական ցուցանիշների մեթոդաբանության մշակում և ներդրում:**<br>Համաձայն Վարձակալության պայմանագրի, 2017 թվականը հանդիսանում է պայմանագրային առաջին տարի, ինչպես նաև բազիսային տարի կատարողական ցուցանիշների համար: Վարձակալը պարտավոր է պատրաստել և ներկայացնել բազիսային տարվա տվյալների հաշվետվություն, որը պետք է ներառի կատարողական ցուցանիշների ելակետային տարեկան արժեքները արդեն իսկ հաստատված մեթոդաբանության համաձայն: Կատարողական ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանության վերաբերյալ անկախ տեխնիկական աուդիտորին վերապահված է մասնագիտական կարծիքի ներկայացման իրավասություն, որը կներառվի անկախ տեխնիկական աուդիտորի հաշվետվության մեջ:<br>**4) Հաշվետվությունների ընդունման, գնահատման և արձագանքման համակարգի ներդրում:**<br>Վարձակալության պայմանագրով նախատեսված հաշվետվությունների մասով Վարձատուն իրականացրել է Վարձակալի կողմից 2017թ. ընթացքում ներկայացրած հաշվետվությունների ուսումնասիրությունը և վերլուծությունը, և անհրաժեշտության դեպքում Վարձակալության պայմանագրով սահմանված կարգով ներկայացրել է իր դիրքորոշումը: Վարձակալության պայմանագրով նախատեսված մեկանգամյա հաշվետվությունները՝ Վարձակալի գործունեության տարբեր ուղղությունների պլաններն ու ռազմավարությունները տրամադրվել են անկախ տեխնիկական աուդիտորին՝ հաստատման համար:<br>ՀՀ ԷԵԲՊՆ ՋՏՊԿ-ում ստեղծվել է գույքի կառավարման և ներդրումների իրականացման վարչություն, որն ամբողջությամբ համալրված է համապատասխան կադրերով: Գերմանական զարգացման բանկի (KfW) դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացվել է գույքի կառավարման խորհրդատուի մրցույթ, որի գործառույթներից է վարձակալությամբ հանձնված գույքի հաշվառման, գրանցման, պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի իրականացման հաշվետվությունների արձագանքման մասով խորդրդատվության ապահովումը: |

| | | | |
|---|---|---|---|
| ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե | 111. | Ջրամատակարար ընկերության սպասարկման տարածքից դուրս մնացած 560 գյուղերից որոշակի խմբաքանակի/կլաստրի ընտրություն ու ջրամատակարարման ու ջրահեռացման բարելավում | Ներկայումս շրջանառության մեջ է դրված <<ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի N122-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի <<ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին>> N 122-Ն որոշման N2 հավելվածի 111-րդ կետը: |
| ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե | 112. | Խոնավ (գերխոնավ) գյուղատնտեսական հողատարածքների մելիորատիվ վիճակի բարելավման աշխատանքների իրականացում: | **1) Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում,**<br>Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում և ընթացիկ նորոգում, կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման ծրագրերով հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են 189 կմ ընդհանուր երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման, դրենաժային ցանցի վերականգնման, նորոգման և մաքրման աշխատանքներ:<br>**2) Գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքների իրականացում**<br>Հաշվետու ժամանակաշրջանում Արարատյան դաշտում տեղադրված 455 դիտողական հորատանցքներում իրականացվել են գրունտային ջրերի մշտական դիտարկումներ: |

**ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե**